ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՎՁՄԳՀԾՁԲ--09/17»

ք. Եղեգնաձոր «29» հունիս 20 17թ.

«ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմ » պետական կառավարչական հիմնարկն, ի դեմս Կ.Սահակյանի որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Ավարդպիսի ՍՊԸ-ն, ի դեմս տնօրենՀ.Ավագյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ,,Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում,, ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում1:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով2:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային

---

[1] *Կիրառվում է, եթե կնքվում է շինարարական ծրագրի կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիր:*

[2] *Կիրառվում է, եթե կնքվում է շինարարական ծրագրի կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիր:*

ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1050000 (մեկ մլն հիսուն հազար) ՀՀ դրամ,:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[3]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[4]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

---

[3] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում կուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հարկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[4] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

ռասաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **10** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան	<<Ավիարդպիսի>> ՍՊԸ
ք.Եղեգնաձոր.Շահումյան 5	Ք.Գաջեգործների փ 1Ատուն
ՀՀ Ֆին. Նախ. գործառնական վարչ.	ՀՎՀՀ 00443309
Հ/Հ 900351051025	Հ/Հ 205002218423
ՀՎՀՀ 08907717	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Աշխատակազմի ղեկավար	**Տնօրեն՝**
----------**Կ.Սահակյան**	---------- **Հ.Ավագյան**
/ստորագրություն	**/ստորագրություն**
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված N 1

« 29 » հունիս 20 17թ. կնքված

«ԿՁՄԳՀԾՁԲ--09/17» *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը՝
1	50111170/1	Հունդայի Տուկսոն մակնիշի 031 լլ 55 պետհամարանիշի. Նիսան Ալտիմա մակնիշի 271 SS 60 պետհամարանիշի. ԳԱԶ 3102 մակնիշի 461 LL 11 Պետհամարանիշի . Վազ 21074 մակնիշի 285 լլ 11 պետհամարանիշի. Վազ 21213մակնիշի 961 լլ 11 պետհամարանիշի. Վազ 21074 մակնիշի 285 LU 18 պետհամարանիշի տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում	Հազ. դրամ	10500 00	1	Ք. Երևան	15.12.2017

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարան

ք.Եղեգնաձոր.Շահումյան 5

ՀՀ Ֆին. Նախ. գործառնական վարչ.

Հ/Հ 900351051025

ՀՎՀՀ 08907717

Աշխատակազմի ղեկավար

Կ.Մահակյան

/ստորագրություն

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Ավարդպիսի>> ՍՊԸ

Ք.Գաջեգործների փ 1Ատուն

ՀՎՀՀ 00443309

Հ/Հ 205002218423

«Ինեկոբանկ» ՓԲԸ

Տնօրեն

Հ.Ավագյան

/ստորագրություն

Կ.Տ

Հավելված 1
<<29>> հունիսի 2017թ. կնքված
ՈՎՀՄԳՀԾՁԲ-09/17 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման՝ SU-1 (տեխնիկական զննման (դիագնոստիկա)), SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի՝

հազ.դրամ

NN	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները)					
		ԳԱԶ -3102 461 LL 11	ՎԱԶ 21074 285 LL 11	ՎԱԶ 21074 591 LU 18	ՎԱԶ 21213 961 LL 11	NISSAN-ALTIMA 271 SS 60	HYNDAI-TUCSON 031 LL 55
1	2	3	4	5	7	8	9
	SU-1 ներառվող ծառայությունների անվանում						
1	Բռնկման համակարգի ստուգում	-	-	-	-	-	-
2	Սառեցման համակարգի ստուգում	-	-	-	-	-	-
3	Յուղման համակարգի ստուգում	-	-	-	-	-	-
4	Արտանետման համակարգի ստուգում	-	-	-	-	-	-
5	Կցորդման համակարգի ստուգում	-	-	-	-	-	-
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	-	-	-	-	-	-
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	-	[redacted]			-	-
8	Կարգաթային փոխանցման աշխատանքի ստուգում	-	-	-	-	-	-
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	-	-	-	-	-	-
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի	-	-	-	-	-	-
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	-	-	-	-	-	-
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	-	-	-	-	-	-
13	ABS համակարգի ստուգում	-	[redacted]			-	-
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	-	-	-	-	-	-
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	-	-	-	-	-	-
16	Թռուցիկի վիճակի ստուգում	-	-	-	-	-	-
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և	-	-	-	-	-	-
	SU-2 ներառվող ծառայությունների անվանում						
18	Շարժիչի հանում և տեղադրում				15 տասնհինգ		
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում		[redacted]				
20	Նույնը կոնդիցիոների դեպքում						
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	[redacted]					
22	Շարժիչի վերանորոգում						
23	Նույնը DOHC դեպքում				40 քառասուն		
24	Նույնը V6-ի դեպքում	[redacted]					
25	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում						
33	Շարժիչի գլխիկիվերանորոգում				2 երկու		
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ				10 տասը		
62	Ղեկավարման բլոկի վերանորոգում						
63	Բռնկման կարգավորում					20 քսան	
64	CO կարգավորում			3 երեք	1 մեկ		
				3 երեք	1 մեկ		

65	Խարխարակի հանում և տեղադրում				2 երկու		
66	Խարխարակի վերանորոգում				3 երեք		
67	Օդի զտիչի փոխարինում			1 մեկ	1 մեկ	1 մեկ	
68	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում						10 տասը
69	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում			7 յոթ		10 տասը	18 տասնութ
70	Բենզավառիչի փոխարինում						
71	Վառելիքի զտիչի փոխարինում			1 մեկ		2 երկու	2 երկու
72	Վառելիքի բաքի հանում և տեղադրում						
73	Տրամլյորի հանում և տեղադրում				2 երկու		
74	Տրամլյորի վերանորոգում				3 երեք		
	3. Սառեցման և արտածման համակարգ						
80	Ռադիատորի վերանորոգում	8 ութ					
81	Թերմոստատի փոխարինում	3 երեք					
82	Ջրի պոմպի փոխարինում	6 վեց					
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ						
94	Կցորդման սկավառակների և առանցքակալի	10 տաս				16 տասնվեց	
95	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում					1 մեկ	
96	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում					1 մեկ	
97	ՓՏ-ի հանում և տեղադրում	8 ութ					
98	ՓՏ-ի վերանորոգում	8 ութ					
99	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	2 երկու					
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ						
113	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում		2 երկու	2 երկու			
115	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում				3 երեք		
	6. Առջևի և հետևի կամրջակներ						
118	Հետևի կամրջակի լիկատար քանդում և հավաքում		25 քսանհինգ	25 քսանհինգ			
119	Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և						
120	Առջևի կամ հետևի կամրջակի կիսասոնու հանում և						
121	Կիսասոնու առանցքակալի փոխարինում						
	7. Կախոց						
125	Անվակունդի առանցքակալի փոխարինում	4 չորս	4 չորս				
131	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում						
132	Զսպանակի հանում և տեղադրում						
135	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում						
136	Ներքևի լծակի հանում և տեղադրում		4 չորս				
137	Ներքևի լծակի վռանների փոխարինում					6 վեց	
142	Վերևի լծակի վռանների փոխարինում		1 մեկ			5 հինգ	
143	Գնդե հոդակապերի փոխարինում		4 չորս			4 չորս	
149	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում						
	8. Ղեկային մեխանիզմ						
159	Ղեկային կալունի վերանորոգում					12 տասներկու	
160	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում					3 երեք	
161	ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում					5 հինգ	
	9. Արգելակային համակարգ						
176	Արգելակային համակարգի օդահանում					2 երկու	2 երկու
182	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	2 երկու				4 չորս	5 հինգ
183	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում					4 չորս	5 հինգ
184	Հետևի կոճղակների փոխարինում	2 երկու					

185	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	6	վեց								
188	ABS-ի հանում և տեղադրում							12	տասներկու		
189	ABS-ի վերանորոգում							20	քսան		
191	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	2	երկու								
	պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ										
	1. Շարժիչ										
3	Բարձիկ							4	չորս		
4	Շարժիչի գլխիկի միջադիր							2	երկու		
5	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ							3	երեք		
6	Շարժիչի բաշխիչ լիսեռ										
7	Շարժիչի փական դուրս մղող							8	ութ		
8	Շարժիչի փական ներս մղող							8	ութ		
9	Շարժիչի փականի խցուկ							0,6	զրո ամբողջ վեց		
10	Ծնկաձև լիսեռ										
11	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի							1	մեկ		
12	Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի							0,5	զրո ամբողջ հինգ		
13	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ							3	երեք		
14	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ							3	երեք		
15	Հենակային տափողակ							0,5	զրո ամբողջ հինգ		
16	Սխոց							16	տասնվեց		
17	Մխոցային օղակներ							15	տասնհինգ		
20	Շղթա							6	վեց		
21	Հիդրոծգան							4	չորս		
22	Հրիչ							4	չորս		
23	Հիդրոհրիչ							3	երեք		
24	Բաշխակ							4	չորս		
25	Հանգստարար							2	երկու		
31	Կարտերի միջադիր							1	մեկ		
32	Միջադիր							2	երկու		
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ										
36	Յուղի զտիչ							3	երեք		
49	Վառելանյութի զտիչ			2	երկու			10	տասը	20	քսան
50	Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման			3	երեք			10	տասը	10	տասը
53	Օդի զտիչ			3	երեք			6	վեց	10	տասը
	3. Սառեցման և արտածման համակարգ										
69	Ռադիատորի փողրակ	1	մեկ								
70	Թերմոստատ	3	երեք								
71	Ջրի պոմպ	8	ութ								
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ										
90	Կցորդման տանող սկավառակ	18	տասնութ					26	քսանվեց		
91	Կցորդման տարվող սկավառակ										
92	Կցորդման առանցքակալ	4	չորս					15	տասնհինգ		
93	Կցորդման փողրակ	2	երկու					12	տասներկու		
94	Փոխանցման տուփ										
95	ՓՏ-ի առջևի խցուկ	0,5	զրո ամբողջ հինգ								
96	ՓՏ-ի հետևի խցուկ	0,5	զրո ամբողջ հինգ								
97	ՓՏ-ի առանցքակալ	3	երեք								
98	ՓՏ-ի առաջնային լիսեռ										

99	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ						
100	ՓՏ-ի եռանիվ	3 երեք					
101	ՓՏ-ի ատամնանիվ	10 տասը					
102	Համաժամիջ	5 հինգ					
103	Մուֆտ	8 ութ					
104	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	5 հինգ					
108	Տրանսմիսսիոն յուղ.	1.5 մեկ ամբողջ հինգ					
	5. Թաշխիչ տուփ, կարդանային լիսեռ						
121	Կարդանային լիսեռի խաչուկ						
	6. Առջևի և հետևի կամրջակներ			5 հինգ			
123	Ռեդուկտոր						
124	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ		40 քառասուն	28 քսանութ	40 քառասուն		
125	Դիֆֆերենցիալ		25 քսանհինգ	25 քսանհինգ			
126	Դիֆֆերենցիալի սատելլիտ		6 վեց	6 վեց			
127	Տանող ատամնանիվի խցուկ		1 մեկ	1 մեկ			
128	Տանող ատամնանիվի առանցքակալ		4 չորս	4 չորս			
129	Դիֆֆերենցիալի առանցքակալ		4 չորս	4 չորս			
	7. Կախոց						
140	Անվակոնդի ներքին առանցքակալ	3 երեք	3 երեք				
141	Անվակոնդի արտաքին առանցքակալ	3 երեք	3 երեք				
145	Հարվածամեղմիչի թասակ						
147	Առջևի հարվածամեղմիչ						
148	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց						
149	Հարվածամեղմիչի վռան						
151	Ներքևի լծակի վռան		10 տասը			10 տասը	
153	Վերևի լծակի վռան		3 երեք			5 հինգ	
154	Գնդե հոդակապ		12 տասներկու			40 քառասուն	
159	Հետևի ցնցամեղմիչ						
	8. Ղեկային մեխանիզմ						
173	Ղեկային կալոնի առանցքակալ					10 տասը	
174	Ղեկային կալոնի խաչուկ					10 տասը	
	7. Արգելակային համակարգ						
194	Առջևի արգելակային կոնդակների կոմպլեկտ	5 հինգ				45 քառասունհինգ	45 քառասունհինգ

196	Հանդերձանքի [illegible]	9 հատ	[redacted]			55 [illegible]	55 [illegible]
197	[illegible]	36 [illegible]					
200	ABS [illegible]						
202	[illegible] DOT 4 800գրամ	2 [illegible]				10 [illegible]	
						2 [illegible]	2 [illegible]

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան	«Աբարդիտիսի» ՍՊԸ
ք. Եղեգնաձոր, Շահումյան 4	[illegible]
ՀՀ ֆին. նախ. գործառնական	[illegible]
Հ/Հ 900351051025	Հ/Հ [illegible]
ՀՎՀՀ 08903217	[illegible]
Աշխատակազմի ղեկավար	Տնօրեն
[illegible]	[illegible]
Ա.Տ.	

00443309 «ԱԲԱՐԴԻՏԻՍԻ» «ABARDITISI» «AVARDPISI»

Հավելված N 2

« 29 » հունիս 20 17թ. կնքված

«ՎՁՄԳՀԾՁԲ--09/17» *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի հա[redacted]ը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111170/1	տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում	-	-	-	-	-	367500	5250000	5250000	5250000	1050000	1050000	1050000	1050000

[redacted]

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարան

ք.Եղեգնաձոր.Շահումյան 5

ՀՀ Ֆին. Նախ. գործառնական վարչ.

Հ/Հ 900351051025

ՀՎՀՀ 08907717

Աշխատակազմի ղեկավար

---------- Գ.Նահակյան

/ստորագրություն

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Ավայոյպիսի>> ՍՊԸ

Ք.Գաջեգործների փ 1Ատուն

ՀՎՀՀ 00443309

Հ/Հ 205002218423

«Ինեկոբանկ» ՓԲԸ

Տնօրեն

---------- Հ.Ավագյան

/ստորագրություն

Կ.Տ

Հավելված 3

« 29 » հունիս 20 17թ. կնքված

«ՎՁՄԳՀԾՁԲ--09/17» *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1

« 29 » հունիս 20 17 թ. կնքված

«ԿԶՄԳՀԾՁԲ--09/17» *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի

Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____

պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

անձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն